ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Թիվ 28
« 01 » մարտի 2017թ.

Լոռու մարզի մարզպետ
Պարոն Ա.Նալբանդյանին

Եղեգնուտի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում համայնքի ավագանու թիվ 5-Ն և 6-Ա որոշումները:

Համայնքի ղեկավար՝ Մ.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, հասցե 3 փ. N 2
հեռախոս 6-83-37
էլ. փոստ yeghegnut.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » փետրվարի 2017 թվականի թիվ 5-Ն

ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով ՝

Եղեգնուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Եղեգնուտ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :
2. Հաստատել 2016 թվականի Եղեգնուտ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Աղաջանյան Գառնիկ			
Գալստյան Սեյրան			
Գրիգորյան Լիդիյա			
Կարապետյան Գրիգոր			
Պողոսյան Արթուր			

Համայնքի ղեկավար՝ Մ.Հովհաննիսյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Երեգնուտ համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 24-ի

թիվ 5-ն որոշման

ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի մասնակիցներ, Ձեզ եմ ներկայացնում 2016թ.-ի տնտեսական տարում համայնքապետարանի կատարած աշխատանքների համառոտ հաշվետվությունը:

Հաշվետու տարում համայնքապետարանի կատարած աշխատանքները հիմնականում ունեցել են 2 ուղղություն. առաջինը ֆինանսական գործունեությունն է, կապված բյուջեի ձևավորման և ֆինանսական միջոցների ճիշտ տեղաբաշխմանը ըստ հոդվածների: Երկրորդ ուղղությունը համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման հիմնահարցերն է:

2016թ.-ի համայնքապետարանի բյուջեն կազմելիս հաշվի է առնվել երկու կարևոր հանգամանք: Դա բյուջեի եկամտային և ծախսային բաժինների ֆինանսական ռեալ միջոցների բաշխումն է ըստ հոդվածների, որը և հիմք է հանդիսանում ամբողջ տարվա ընթացքում համայնքապետարանի ֆինանսական գործունեության խելամիտ և արդյունավետ կազմակերպմանը: Բյուջեն կազմելիս հիմք է հանդիսացել երկու կարևոր ֆինանսական բաղադրիչներ: Առաջինը սեփական եկամուտների հավաքագրումն է, և երկրորդը պետության կողմից հատկացվող դոտացիան: 2016թ.-ին համայնքապետարանի բյուջեն կազմել է 18405.6 հազար դրամ, որից սեփական եկամուտներ՝ 2717.6 հազար դրամ և դոտացիա՝ 15688.0 հազար դրամ:

Համայնքապետարանի առաջնահերթ խնդիրներից ամենակարևորը ֆինանսական առումով հարկատեսակների հավաքագրումն է: Դա հողի հարկն է, գույքահարկը և վարձավճարների գանձումը ըստ ամիսների, եռամսյակների: Տարվա ընթացքում ըստ հարկատեսակների բյուջեով պլանավորված է եղել.

1. հողի հարկ – 1244.8 հազար դրամ, կատարման տոկոսը 100.0
2. գույքահարկ – 942.6 հազար դրամ, կատարման տոկոսը 100.0
3. վարձավճար – 481.2 հազար դրամ, կատարման տոկոսը 95.0
4. տեղական տուրք – 49.0 հազար դրամ, կատարման տոկոսը 144.0

Որպես աշխատավարձ բյուջեով հատկացվել է 11196.7 հազար դրամ, նույնքան էլ վճարվել է: Մանկապարտեզին որպես դրամաշնորհ հատկացվել է 4648.3 հազար դրամ

անձնակազմին աշխատավարձ վճարելու, նույնքան էլ վճարվել է: Դրամական հատկացումներ են կատարվել կապի, էներգետիկ, համակարգչային, լրատվական և այլ ծառայությունների համար: Վճարվել է նաև օգնություն ծննդի, մահվան և սոցիալապես անապահով ընտանիքներին:

Տարվա ընթացքում բյուջեի վարչական ծախսերից տնտեսվել է շուրջ 173.0 հազար դրամ, որը տարվա վերջում փոխանցվել է ֆոնդային բյուջե: Ներկայումս ֆոնդային բյուջեում տնտեսված ֆինանսական միջոցներից գոյացել է շուրջ 10 մլն դրամ, որը նախատեսված է համայնքի սոցիալական խնդիրների լուծման ֆինանսավորման համար: Այդ խնդիրներից կարևոր է ճանապարհների վերանորոգման, որոշ թաղամասերի գազաֆիկացման, փողոցային լուսավորման և այլ կարիքների հոգածության համար:

Հաշվետու տարում թե վարչական, և թե ֆոնդային բյուջեների հետ կապված խնդիրներ չենք ունեցել: Ֆինանսական բոլոր հարցերը համաձայնեցվել է մարզպետարանի ֆինանսա-տնտեսական վարչության հետ, հաստատվել ավագանու կողմից:

Հավաքագրված հարկային եկամուտները ժամանակին մուծվել է բանկ: Ոչ համայնքապետարանի, ոչ էլ մանկապարտեզի աշխատավարձի պարտքեր չունենք: Այսքանը մեր կողմից կատարած ֆինանսական գործունեության մասին:

Այժմ ուզում եմ մի քանի խոսքով Ձեզ ներկայացնել համայնքի սոցիալական խնդիրների ուղղությամբ կատարված աշխատանքները: Դրանք բազմազան են, սկսած ճանապարհների վերանորոգումից և բարեկարգումից, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման համակարգերի աշխատանքների հսկողությունից, աղբահանության կազմակերպումից և այլն: Տարվա ընթացքում համայնքում գարնանը և աշնանը կատարվել է ճանապարհների վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ Վանաձորի «Ճանշին» ՓԲԸ-ի, համայնքի բնակչության կողմից, ինչպես նաև համայնքապետարանի կողմից ֆինանսական ներդրմամբ՝ 1.5մլն դրամ ֆոնդային բյուջեից: Ամեն եռամսյակ կատարվել է աղբահանություն: Սանիտարական հսկողություն է իրականացվել ջրամբարների, դիտահորերի, ջրագծերի և այլ կոմունիկացիաների վրա:

Համայնքապետարանի աշխատակազմը ներկայումս ապահովված է համակարգչային ծառայության ամենաանհրաժեշտ միջոցներով: Համայնքապետարանի աշխատակազմը սերտ աշխատանքային համագործակցության հետ է մարզի բոլոր տարածքային ծառայությունների հետ: Առաջին հերթին մարզպետարանի, նրա վարչությունների և բաժինների, ոստիկանության, զինկոմիսարիատի, արտակարգ իրավիճակների, սոցիալական ծառայության, համաճարակային կենտրոնի և այլ ծառայությունների հետ:

Համայնքապետարանի աշխատակազմը միշտ էլ ուշադիր է բնակչության կողմից տրվող դիմումների և բողոքների նկատմամբ: Դրանք ժամանակին քննարկվում են և տրվում համապատասխան լուծում կամ որոշում: 2016թ.-ին ունեցել ենք համայնքի ղեկավարի 32 որոշում, 93 կարգադրություն, ավագանու 13 նիստ, 28 որոշում: Ավագանին միշտ ակտիվ է

եղել համայնքի առջև դրված խնդիրների քննարկման, դրանց առաջնահերթության որոշման, ճիշտ ու ժամանակին լուծման գործում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2016թ.-ին ավարտվել է 2013-2016թթ. քառամյա ծրագիրը, ուզում եմ մի քանի խոսքով ներկայացնել այդ ծրագրի շրջանակներում վերցրած պարտավորությունների մասին: Նշված ծրագրում ընդգրկված են 5 կարևոր խնդիրներ, որոնք հիմնականում ունեն սոցիալական ուղղվածություն:

Առաջին ծրագիրը համայնքի մանկապարտեզի մշտական գործունեության ապահովումն է, շենքի վերանորոգումը և կահավորումը: Այս ծրագիրը ամբողջությամբ կատարվել է Հայաստանի Սոց.ներդրումների հիմնադրամի կողմից հատկացված 1.7 մլն դրամով, գնվել է կահույք և սպասք: Ֆրանսիահայ բարերարների կողմից վերանորոգվել է շենքը, տեղադրվել արևային ջրատաքացուցիչներ: Շենքը ապահովված է տաք և սառը շուրջօրյա ջրամատակարարմամբ: Աշխատանքներ են տարվում մանկապարտեզի գազաֆիկացման ուղղությամբ: Կատարվում են նախագծա-նախահաշվային աշխատանքներ: Այժմ մանկապարտեզ է հաճախում 15 երեխա՝ մեկ խմբով:

Երկրորդ ծրագիրը համայնքի ճանապարհների վերանորոգման և բարեկարգման ծրագիրն է: Այս ծրագրի շրջանակներում ևս կատարվել է ծավալուն աշխատանք: Մարզպետարանի կողմից հատկացված 26 մլն դրամով և համայնքային 2.5 մլն դրամի ներդրումով 3.5կմ ճանապարհ է վերակառուցվել:

Երրորդ ծրագիրը խմելու ջրի ներքին ցանցի 2.5կմ հատվածի վերանորոգման խնդիրն է: Այն կատարվել է պետ.միջոցների հաշվին՝ շուրջ 10մլն դրամի հատկացմամբ:

Չորրորդ ծրագիրը նախատեսված էր համայնքային կենտրոն կառուցել: Այս ծրագիրը չի իրականացվել, որովհետև Հայաստանի Սոց.ներդրումների հիմնադրամի կողմից կատարված շուրջ 55 մլն դրամը տրամադրվեց ոչ թե համայնքային կենտրոնի կառուցմանը, այլ այդ գումարը տրամադրվեց դպրոցի վերակառուցմանը, որպես առաջնահերթ խնդիր: Կատարվեց լայնածավալ աշխատանք: Փոխվեց դպրոցի ողջ տանիքը, վերակառուցվեց սպորտդահլիճը, շենքը գազաֆիկացվեց և կառուցվեց ժամանակակից ջեռուցման համակարգ:

Հինգերորդ ծրագրով նախատեսված է համայնքի թաղամասերի գազաֆիկացման խնդրի լուծումը: Այս ծրագրով գազաֆիկացվել է մեկ թաղամաս՝ շուրջ 21 ընտանիքով: Ծրագիրը ֆինանսավորել է «ՀԿ Կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ 8316.0 հազար դրամ գումարով:

Քառամյա ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքներին իր ակտիվ մասնակցությունն է ունեցել համայնքի բնակչությունը:

2016թ.-ին համայնքում գրանցվել է 9 ծնունդ, 15 մահ:

Ցավով պետք է նշեմ, որ համայնքում մեծ թիվ է կազմում արտագաղթը: Եթե նախկինում երիտասարդությունը մեկնում էր արտերկիր ժամանակավորապես, այժմ նկատվում է

արտագաղթ ընտանիքներով: Համայնքից ներկայումս բացակայում է 16 ընտանիք: Մարած ծխերի թիվը կազմում է 35 ընտանիք:

2016թ.-ը մեզ համար եղել է բարեհաջող տարի, ոչ միայն տնտեսական առումով, այլ նաև քաղաքական առումով: Այդ տարում անց է կացվել համայնքի ավագանու ընտրություն :

Սրանով վերջացնում եմ Ձեզ ներկայացվող հաշվետվությունս, իսկ Ձեր մասնակցության համար հայտնում իմ խորին շնորհակալությունը:

Համայնքի ղեկավար՝ Մ.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, հասցե 3 փ. N 2
հեռախոս 6-83-37
էլ. փոստ yeghegnut.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » փետրվարի 2017 թվականի թիվ 6-Ա

ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լոռու մարզպետի 05.06.2013թ. թիվ 101/115,3/2854-13 գրությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 24-ի N-164-ն որոշումը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) կետով՝

Եղեգնուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Կազմել Եղեգնուտ համայնքի Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով հետևյալ կազմով՝
   1. Կարապետյան Գրիգոր Վ. ավագանու անդամ, հանձնաժողովի նախագահ
   2. Ավետիքյան Կարմինե Գ. աշխատ. քարտուղար, հանձ. քարտուղար
   3. Վարդանյան Գեղեցիկ Ա. բուժքույր, հանձ. անդամ
   4. Ալիխանյան Վարդանուշ Դ. ուսուցչուհի, հանձ. անդամ
   5. Ավալյան Աշոտ Ե. համայնքային ոստ. բաժանմունքի տեսուչ

2. ՈՒժը կորցրած ճանաչել Եղեգնուտ համայնքի ավագանու 01.07.2013թ.-ի<<Եղեգնուտ համայնքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով կազմավորելու մասին>> թիվ 16-Ա որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Աղաջանյան Գառնիկ			
Գալստյան Սեյրան			
Գրիգորյան Լիդիյա			
Կարապետյան Գրիգոր			
Պողոսյան Արթուր			

Համայնքի ղեկավար՝ Մ.Հովհաննիսյան